

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապտին փողոց

ՄՈՒԴԱԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS

Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ.
ՄԷԿ անգամի աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան ՂՂ. ողջ 100
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան Ֆր. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԻ Ե ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

Լ. Բ. Գ. Ի. Բ.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՆՓԻՍԻ

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քանի մը օրէն, Աղեքսանդրիոյ մեր ազգայինները նոր ընտրութիւններու պիտի ձեռնարկեն և պիտի կազմեն թաղական խորհուրդ մը որուն խնամք-ներուն պիտի յանձնուի գաղթական-նութեան կենսական շահերը:

Ասիկայ կարծուածին չափ թեթեւ գործ մը չէ և ամեն մէկ ազգային պարտական է մեծ միջոցներ մը սպառել շրջահայեցութեան և անձնուրացութեան, քանի որ խնդիրը իրենց ստանձնած պաշտօնին գիտակցութիւնը ունեցող, ճշմարտօրէն ազգասէր և արմատապէս պատուաւոր մարդեր ընտրել գիտնալու մէջ կը կայանայ:

Այսինչ բարեկամի խաթըրը համար, այնինչ բարձրաստիճան մարդուն աչքը մոռնալու համար և կամ անձնական ունեւոր մը յազգեցնելու համար քուէ տալը՝ յիմարներու յատուկ սովորութիւն մըն է որմէ պէտք է վեր գտնուի ինքզինքը ճանչցող մէկը և այն որ իրաւամբ սիրելի գիտէ իր ազգը, եկեղեցին և դպրոցը:

Աղեքսանդրիացիները պէտք է տան թաղականութեան այն կարեւորութիւնը որմէ զուրկ են ընդհանրապէս ուրիշ որեւէ տեղի թաղականութիւնները:

Պոլսոյ մէջ, օրինակի համար, թաղականէ մը շատ բան չի սպասուիր: Բաւական է որ քիչ շատ գիրքի տէր մէկը ըլլայ, պատուաւոր, եկեղեցասէր և ազգաստասէր: Եւստի պէտք չկայ, քանի որ իր պաշտօնը ժամկոյն չախելու, մոմերու տեսակը ճանչնալու և շատ շատ էրիկ կնիկ մը իրարմէ դատելու մէջ կը կայանայ:

Այսպէս չէ սակայն Աղեքսանդրիոյ համար:

Հոս՝ թաղական եղողը քիչ մը վարչագէտ, բաւական խելացի և պէտք եղած չափով ազգասէր պէտք է ըլլայ, արժանաւորապէս վարելու համար իրեն տրուած պաշտօնը:

Որովհետեւ հոս՝ թաղական խորհուրդը թէ՛ տնտեսական խորհուրդ է և թէ՛ քաղաքական: Կրօնական և աշխարհական ամեն գործեր իրենց ձեռքէն կ'անցնին և իրենցմէ վեր

իշխանութիւն մը չկայ որ կարող ըլլայ իրենց ուղղութիւն մը տալ և ցուցունել ճամբան ուրկէ պէտք է ընթանան:

Հարուստ ըլլալը, խօսքի վրայ, sine qua non պայման մը չէ Աղեքսանդրիացի թաղականի մը համար:

Ընդհակառակը պէտք է փնտռել մարդիկ որ հարուստ ըլլալ չեն փափաքել... Գոնէ ազգին կոնակէն:

Գլխաւոր յատկութիւնները որոնցմով պէտք է օժտուած ըլլայ Աղեքսանդրիոյ թաղականը մէկէ աւելի են և կ'արժէ որ մատնանիշ ընենք զանոնք հոս:

Նախ Հայ ըլլալու է անհրաժեշտ: Եւստի ինքն ինքն ապրած մէկը, մեր բարբերուն և սովորութեանց ծանօթ, ազգային օրէնքներու գիտակից և անոնց հետևող. պէտք է սիրտ մը ունենայ որ բարախել գիտնայ մեր ընդհանուրին ցաւերուն և ուրախութեանց հանդէպ:

Իրենց ամբողջ կեանքը օտար շրջանակներու մէջ անցուցած հայերը, հայերու հետ երբեք չփոխ շունեցող մարդիկ և անոնք որ մեր լեզուն կամ չեն գիտեր և կամ չեն ուզեր գիտնալ, այդպիսիները կրնան թերեւ շատ մեծ մարդեր եղած ըլլալ, բայց ամեն պարագայի մէջ, անճարակ և անպիտան թաղականներ ըլլալէ չեն կրնար դադրել երբեք:

Օրինակներ մէջ բերելու հարկ չը կայ մեր այս դիտողութեան ո՛րքան բանացի ըլլալը ապացուցանելու համար:

Նոյնպէս պէտք է թաղական ընտրուին այն ամեն ապուշները որ կը կարծեն թէ իրենցմէ զատ, իրենց ծանօթներու շրջանակէն դուրս գտնուող միացեալ բոլոր հայերը ամենքն ալ պատեալի մարդիկ են: — Միշտ քիչ մը օրոշուի, ըսող ազգաստեանները պէտք է դուրս ձգուին և պէտք է երբեք ընտրուին ամեն անոնք որոնք հայ ծնած ըլլանին դժբաղդութիւն մը, accident մը և կամ իրենց կամքէն անկախ պատճառ մը ըլլալը տանիքներու վրայ կը պոռան:

Իրենց թաղական ընտրուելովը ազգին մեծ շնորհ մը ըրած ըլլալու նըկատումով փրցած մարդիկ, և իրենց տրուած պաշտօնը իրենց համար մեծ

գոհողութիւն մը ըլլալը բացառանշուրջ անձնաւորութիւնները այդ խորհուրդին մէջ աթոռ ունենալու չեն:

Նոյնպէս այդ ժողովին մէջ պէտք է գտնուին կեղծաւոր, շահասէր, փոքրոգի, քծնող, գժուծ մարդիկ որոնք բարձրաստիճան մարդոց անձնական համակրութիւնը և կամ բարեկամութիւնը շահելու համար կը պոտիկնան, կը բանբասնեն, ազգը կը ծախեն և շատ անգամ ալ կը մատնեն:

Ամեն անձնական նկատումէ վեր, ինքնաճանաչ, իր պաշտօնին գիտակցութիւնը ունեցող և վեհանձն մարդերու յատուկ է շնորհքով թաղական ըլլալը:

Աղեքսանդրիացիներու բաղդէն, իրենց մէջ մէկէ աւելի կը գտնուին այդպիսի անհատներ որոնց անունը եկեղեցւոյ պատին վրայ փակցուած կը մնայ զոյգ մը շաբաթէ ի վեր:

Այն պահուն որ Աղեքսանդրիացիները քուէթուղթ մը պիտի ունենան իրենց առջև, նախ պէտք է մէկդի դնեն անցեալ ատելութիւնները, երբեմնի կիրքերը, անշահ կողմնակցութիւնները, պզտիկ անձնական հաշիւները և ապա պէտք է տան իրենց քուէները այնպիսիներու որ կարող ըլլան խաղաղութեան, բարեշրջութեան և յառաջդիմութեան թուական մը բանալ այդ բաղդին ալելուծեալ հայերուն համար:

ԶՈՅԳ ՄԸ ՆԱՄԱԿ

(ՄԻՆ ՎԱՐԴԱՊՈՅՆ, ՄԻՒՍԸ ԺԵՐՄԱԿ)

Բ.

Պ. Յ. ... ԳՐԱԳԵՏ ԱՌ ՕՐ. ՆԻՒՍ
(ՃԵՐՄԱԿ ԹԼԹԻ ՎԱՐՁ ԳՐՈՒՄՍ)

Եւ որովհետեւ չեմ փեթաթեր աղւոր վարդ մը, չեմ ոչնչացնել սիրտած գիրք մը, չեմ կոտրել գեղոր մը որ սիրուն է, այնպէս ալ չեմ պատուիր, Օրբորդ, ձեր համակր ուրուն համակրալի պարունակութիւնը կենդանութիւն կուտայ անկացած յոյսերու և թունդ կը հանէ սիրտ մը՝ որ շատոնց հանգստեան կուտած ըլլալու էր սիրոյ և երջանկութեան աշխարհին մէջ:

Հետեւեալ կը պահեմ բառածալ ձեր թուղթը խաղաքարտէ այն քառակուսի տու-

փին մէջ որ յիշատակարաններու Louvre-է, British Museum-ը:

Ոչ աշխատութեան սենեակի մը և ոչ լայն թիկնաթոռի մը մէջ եկաւ գտաւ զիս ձեր նամակը:

Հայ գրագէտները, Օրբորդ, գրագէտ ըլլալէ պիտի դադրէին եթէ Տէրը՝ լայն թիկնաթոռ մը տուած ըլլար իրենց՝ աշխատութեան սենեակի մը մէջ գետեղուած:

Ձեր նամակը կարդացի ննջասենեակիս մէջ ուր ոչ գրագրան կայ և ոչ ալ թիկնաթոռ: Այլի անկողին մը, չոր գրատեղան մը, կազ աթոռ մը և... «Փառք յաւիտեանս ամեն»:

Ձեզի մատակարարելիք պատրաստութեան առաջինն է այս: Փաշուլին, Օրբորդ, շաբաթ կրնայ երկայն ըլլալ:

Ուսերու վրայ կ'երեւակայէք ազգը դուրս մը, երկայն մազերով, հրացայտ աչեքով և բերնով մը որ միշտ կը ժպտի, չէ:

Որքան հեռու էք սակայն իրականին վրայ ճշգրիտ գաղափար մը ունենալէ:

Նախ ըսեմ, Օրբորդ, թէ սովորութիւն ունիմ 0 թիւ մեքենայով կտրել տալ այն քանի մը թիւ մազերը որ յամառօրէն կը շրջանակեն կնտակ մը որ մաքուր է և փայլուն ձեր մեծ մօր... ծունկին պէս:

Աղեքս հրացայտ ըլլալէ շատ հեռի են և հազիւ կրնան իրենց պատուահանները բանալ զոյգ մը ապակիի ետեւ:

Գալով բերնիս, օ՛հ, աւելի լաւ է որ չի բանամ... ձեր յուսախաբութիւնը կուտարեալ չընելու համար:

Ինչպէս կը տեսնէք, սիրելի Օրբորդ, ֆիզիքական չի համապատասխանել այն գեղարարական ընդշմարտած պատկերին, որուն հաճած էք պատիկ անկիւն մը շնորհել ձեր հարուստ երեակայութեան մէջ:

Ձեզ գիտեք որքան զաւն է ինչ համար ստիպուած ըլլալ իմ ձեռքովս աւրշտիկ այն լաւատես գաղափարը զոր մեր վրայ շինած ըլլալ կը թուիք և քանզի ձեր պատրաստութեան պաշարը: Որովհետեւ թղթի կոտորներ մոտեւ գիտենք, ձեզի այնպէս կուգայ որ մէկմէկ prince charmantներ ենք մենք, խեղճ արարածներ, որ ուրիշներու երջանկութիւնովը կ'ապրինք, մեզի համար երջանկութիւն մը չի կրնալ գտնելու համար:

Այն ուրախ, զուարթ տողերը զորո մերթ ընդ մերթ գրչիս տակէն կը օպրին, կարծեսնել տալու չեն ձեզի թէ սրտի գոհունակութենէ մը և կամ մտքի անգործութենէ մըն է որ կը բղիկն:

Մենք մեր անցեալին յիշատակներովը կ'ապրինք, հին երազներու վրայ կ'անդրա-

Խ. Տ Ե Մ Ի Ր Զ Ե Ա Ն

Ա Տ Ա Մ Ն Ա Ք Ո Յ Ժ

ԴԵՍԱՄԷԼ ԳԱՂԱՑ ԹԻՒ 3 ՕՐԷԼ ՇԷՓԸՐՏՈՒ ԴԻՄԱՑ

Եւ երբորական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն ընականին յար և նման կեղծ ակուաներու, ջանքիներու ոսկիէ, ալիւմինիումէ, ֆաւորիտէ, Ապահով և տոկուն քլորոպատ ոսկի, բլաթին, կայլին, կայլին: Ընտելութեան հիւանդութեանց գաբսանում երբորական և ուրիշ միջոցներով:

դառնանք, և մեր երեւմեի յոյսերու քաղ-
ուածքն է որ կ'ընենք:

Եւ կեանքի այդ հասնումի միջոցին է
որ մենք կարողանանք այդ տողերը գործ
բերել, ձեզի պէս ազնիւ հոգիներ, իրենց կա-
սական չքմեղութեամբ սիրուն կը գտնեն:

Ստեփ կը տեսնուին զբաժնետերու մէջ
կիներ՝ աստուածօրէն զեղեցիկ, վարդապետ
թիթեանիներ, սուրի երազներ, սակայն ասի-
սոս, նստնց և ոչ մէկը կը հրապարէ զիս,
որովհետեւ շատոնց Ք որ դարձած եմ ա-
նոնց վրայ հաւատք ունենալէ և ամոր հա-
մար է գուցէ որ միշտ կ'երգեմ զանոնք:

Կը զարմանաք այս ըսածիս վրայ, իրա-
ւունք ունիք, օրինորդ: Ոչ ոք պիտի հա-
ւատար թէ այդ սիրտիս և ժպտուն տո-
ղերը ստորագրողը սկիւղակի մըն է որուն
բերանը այրած է չին գիտեր ո՞վ, չին զի-
սեր ի՞նչ:

Եւ այդ յօդուածները, այդ տողերը, այդ
գրութիւնները մէջ տեղ հանելու համար
մի կարծէք որ մասնաւոր հետ կը բանալի-
ցիմ, բանաստեղծական գիշերներ կը փնտռեմ,
լուսինն ճառագայթը, ծովին եղբորը, վար-
դին թուիլը, սոխակին գեղգեղը, բնակիւ
տեսիլը, երաժշտութեանց մեղեդին, կոյսին
այտերը և ամեն այն բաները որ ներշն-
չումներ կը մտնակեն և ստեղծ կը հանեն
մեր երեւակայութիւնը:

Չէ, Օրինորդ, այնպէս չէ:
Վրաս մի խնդրեք եթէ ձեզ ըսեմ թէ
«Չորդ մը համբարներ» սրճարանի մը մէկ
անկիւնը գրած եմ և «Սեղմորանին շուրջը»
փողոցը քալած միջոցին շարադրած: Եւ
«Դժոխականայէն զէպ ի վեր» յաղարկա-
րութեան մը հետեւած միջոցին յղացած եմ,
մինչդեռ դուք, ապահովապէս, կը կարծէք թէ
ատկեայ գրի առած եմ մետաքսեայ ձ յօդ
գուլպային մէջ բանտարկուած զոյգ մը աշ-
ուոր սրունքներու առջև ծնրալիլ:

Հիմայ որ ամբողջ ճշմարտութիւնը ձեզի
ժառանգեցուցի, ինծի բան մը կը մնայ ընելու,
այն է շնորհակալ ըլլալ ձեզի այն գեղեցիկ
խօսքերուն, թափած արցունքներուն, ար-
տայայտած զգացումներուն համար որոնք
մեր առօրեային լուսադոյն վարձատրութիւ-
նը կը համարեմ ես:

Չեր ինձ ցուցուցած համակրութեան և
բարեկամութեան փոխարէն, կը ներքէ ին-
ծի, Օրինորդ, որ անկեղծ մաղթանք մը ընեմ
ձեզ նկատմամբ:

Ես կը մաղթեմ որ ազնիւ, ձեզ հասկը-
ցող, վառվռուն երիտասարդ մը ձեր զիմացը
եղէ տալու համար ձեզի այն երջանկու-
թիւնը որուն արժանի էք:

Նամակս վերջապէս առաջ, պզտիկ իր-

բառ մը ձեզի: Չըլլայ որ գրապետի մը
հետ ամուսնանաք: Գրադէտները երջանիկ
ըլլալ չեն կրնար և ուրիշները երջանկացը-
նել չեն գիտեր:

Դուք անկեղծ ըլլալ ուզեր էիք ձեր նա-
մակին մէջ: Ես թերեւ չար եղայ: Այս ալ
գրագէտներու անկեղծութիւնն է:

Յ . . .
(ԳՐԱԳԵՏ)

Ընդօրինակեց
Յ. Ա.

ՔԱՂԱՔԱՎԱՆ ԱՅԻՍԱՐԿԵՆ

ՄՈՒՇԷՆ Բարեկի «Բարո Արմէնիա» լը-
րագրին հաղորդուած հետաքալ տեղեկու-
թիւնները որ «Հայ Յեղափոխական Խումբ
Մը» վերնագրին տակ երեցած է յիշեալ
թերթին մէջ, եւրոպական շատ մը թեր-
թերուն կ'ըմանէ արտասուցուած է:

Վանքին վանահայր Յովհաննէս վարդա-
պետի բացակայութեան միջոցին՝ յեղափո-
խական պետ Անդրանիկին խումբը 20 Նո-
յեմբեր 1901ին՝ Սուրբ Առաքելոց վանքը
զբաւեց, ուր 50 որբ նաև ներքին սպա-
սաւորներէն 30 այր և կին կը գտնուէին:
Խումբը 33 հոգիէ կը բաղկանար: Ստուգ-
ուեցաւ որ զբաւման միջոցին որ 19 օր
տևած է՝ խումբը վանքին և եկեղեցիին վե-
րաբերեալ ինչքերուն խնայած է. սակայն
գտնուող բոլոր անձերուն սնունդին համար
7 կող մորթուած են և վանքին ալիւրէն
պէտք եղածը առնուած:

Ֆերիկ ՄԷՏԷՄԱՆ Այլ բաշա 1,200 հո-
գի բաղկացեալ երկու գումարտակով Սուրբ
Առաքելոց վանքը շուրջ կողմէն պաշարեց և
բոլոր ճամբաները կտրեց:

Բանակցութեան համար շատ մը անո-
ցուտ փորձերէ, վանահայրին երեք անգամ
գլխաւորներէն, ատոր և կամ առաջնորդ խոս-
քով Ծ. վարդապետին կողմանէ զրկուած,
վեց նամակներէ յետոյ, Առաջնորդը իր
կեանքի վտանգը աչք առնելով Գեկտ. Վին
վանքէն ներս մտաւ, իրեն հետ ունենալով
երկու թուրք ոստիկանապետներ և ուրիշ մի
քանի անձեր:

Առաջնորդը և իր հետեւողները նախ
տեղ մը փակուեցան, յետոյ Անդրանիկ ե-
րեցաւ խալիլ Պէշիւրին յափշտակած մէծի-
տիլէ պատուանշանը կտրեցէն կախած և
յայտարարեց որ ինքն էր այս վերջինը
սպաննողը, նաև յարեց.

1. Թէ ինքն և իր խումբը կ'ազնու մար-
դիկ ապստամբներ չէին, բայց Քիւրտներուն
զոհ եղող իրենց և իրենց հայրենակիցնե-
րուն կեանքը կը պաշտպանէին:

Եր թէ բան մը պատահած չըլլար. դէպի
անոր ծոցեւ մըմնջելով:

— Հոգ չէ, ինծի նայեցէ՛ք... ես ազէկ
գիտէի որ չէր կրնար յաջողիլ, բայց զարձ-
եալ վտահուծութիւն ունիմ. ես, որչափ ալ
արեւոյ, որեւէ ուրիշէ մը աւելի իշխանու-
թիւն ունիմ ինքզինքս պաշտպանելու հա-
մար և... պիտի փորձեմ... համբուրեցէք
զիս, բախտս կը բացուի:

Ժերմէն զրկեց զայն, ու վայրկեան մը
իր կտրեցէն վրայ սեղմած բռնեց զայն:

— Սիրելի՛ աղջիկ, ըսաւ, չպիտի գիտ-
նաս երբեք թէ ո՞րչափ կը տառապիմ քեզի
օգնելու անկարող ըլլալուս, ինչո՞ւ համար
մեր կամքը պէտք է որ այնչափ տկարա-
նայ այն դժուարութեանց առջև զոր կեան-
քը անողորմաբար կը սփռէ մեր ճամբուն
վրայ:

2. Նքրէք զիւրիւր աւարի չէին տուած,
թղթատարական պայուսակներու վրայ յար-
ձակած կամ թէ անվնաս անձեր մեռուցած:

3. Շուշումերի սպաննութիւններուն հե-
ղեակներէն գտնուող երեք ֆիւրտ և խա-
լիլ Պէշիւրը զարկած սպաննած էին:

4. Ընդհանրապէս ֆիւրտները, — այս
տեղ մէկիկ մէկիկ և կատարելապէս թուեց
հրոյր: Թիւնները — անթիւ աւարառութիւն-
ներ բրած, բռնաբարութիւններ՝ մարդաս-
պանութիւն և ջարդեր գործած էին թէ
Մշոյ և թէ Սասունի զիւրիւրուն մէջ:

5. Թէ իրենք Սուլթանին իշխանութիւնը
կը ձանձնային, սակայն մէկ Սուլթան
մը կը բաւէր և թէ չէին ուզեր երբեք, ու-
րիշ շատ մը սուլթաններ ունենալ յանձին
ֆիւրտ պետերու, որոնք ճիշդ Սուլթաննե-
րու պէս Հայերու կեանքին և ընչից տէր
կը դառնային, իրենց հաշտայն տուրք կը
գանձէին և իրենց սեզածին պէս օրէնք կը
չինէին:

6. Անձնատուր պիտի ըլլային եթէ իր-
ենց և երկրին Հայոց համար ապահովու-
թիւն երաշխաւորէր:

Առաջնորդ խոսքով վարդապետը այն ա-
տեն վանքէն մեկնեցաւ և Մուշ հասնելուն
կուսակալին, տեղւոյն զինուորական հրամա-
նատարին, Անգլիոյ և Ռուսիոյ Հիւպատոս-
ներուն հաղորդեց Անդրանիկի յայտարա-
րութիւնները որոնք տեղեկագրի մը մէջ
ամփոփուեցան:

Թուրք կառավարական իշխանութիւնները
կը պատրաստուէին իրեն նոր պատուիրա-
կութիւն մը զրկելու երբ Գեկտ. 9ի առաւ-
տուն իմացուեցաւ որ ինքը և իր բոլոր
խումբը առջի գիշեր վանքէն մեկնած էին:
Իր ընկերներէն երկու հոգի պաշարման
միջոցին սպաննուած էին: Երկու թուրք
զօրք սպաննուած և երկուք ալ վիրաւորուած:
Կը կարծուի որ Անդրանիկ Սասունի լեռ-
ները անցած է:

Խալիլ Պէշիւր Մշոյ գաւառին ամենէն
վայրագ ֆիւրտ պէշիւրէն մին էր և Հիւն-
կի Սպաղանքի (200 հոգի ջարդած) Շուշ-
ումերի մէջ անթիւ սպաննութիւններու և
կեղեքութեան հեղինակ եղած:

ՀԱՊԵՇԻՍՏԱՆԷՆ Երրորդ հասած վեր-
ջին լուրերէն կը հասկցուի որ Մէնէքի
Կայսրը իր Երրորդ ուղեւորութեան մասին
զեռ որոշում չէ տուած:

Կայսրը հրամայեց որ Հապէշիստանի
մայրաքաղաքին և Խալիլի կարմիր ծովու
զաղթականութեան միջև հեռագրի և հե-
ռաձայնի լինելուն դրուելու գործողութիւն-
ները փութացուին: Հապէշ կառավարութիւ-

Բայց Սթա Ապուհա, հիմայ այլեւ ըս-
փոփուած, ոյժ առած, յաղորդուն վտահ, նորէն
գտաւ իր առջի անեղիւղ ազուր ծայրը:

— Ինչ ընենք, թերեւ այսպէս աւելի
ազէկ է. եթէ ամեն բան զիւրիւր ըլլար,
ալ մարդ բանի մը փափաք չէր ունենար:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ժերմէն ամբողջ օրը բարեկամութիւն չի
տեսաւ. երեկոյեան դէմ, երբ փոքրիկ հա-
նըմներուն հետ պտոյտէն տուն կը դառ-
նար, ուր ճիւղեր կարծեց չալի, որ զինքը
անշարժ դամեցին հարմին զրանը առջև:

— Ինչ է աս, հարցուց տղոյը:

Անկար, անարգու ձայնով և առանց
զարմացած երեւալու, ըսաւ:

— Գերի մը որուն պատիժ կուտան:
Բայց նախ, բոլորովին գունաթափ,

նը իր երկրին համար պէտք եղած հե-
ռագրական սխեմները ինք կը հոգայ:

Ատիս Ապապայի և Հարարի միջև թէկէֆո-
նի գործածութիւնը հետզհետէ սովորական
բան մը կը դառնայ:

Ի սկզբան չարագործներու կողմէ թե-
ւերը կը կարուէին, բայց Կայսրը խիստ
հրաման մը հանեց այս բարբառասական
արարքներուն վերջ մը տալու համար:

Կայսրը ծանոյց ամեն կողմ որ թիւ կըտ-
րողներուն ձեռքերը պիտի կտրուէին և այն
գաւառին բնակիչները ուրիշ անցնող թե-
ւերը փնտ մը պիտի կրէին, համեմատա-
բար պիտի դատաւարտուէին տուգանք մը
վճարելու: Անկէց իվեր Ատիս Ապապայէ
Հարար երկարող թէկէֆոնի զծին վրայ
փոթորիկէն յառաջ եկող փառանքէն դատ
ուրիշ բան չտեսնուեցաւ:

ՏԱՄԱՏ Մահմուտ փաշայի երկու որ-
դերը վերջին օրերս Երիտասարդ Թուրքե-
րը գումարումի մը հրաւրած էին թուր-
քիոյ տրուելիք նոր սահմանադրութեան մը
ծրագիրը ուսումնասիրելու մասին: Քառա-
սունի չափ ժողովականներ Երուսաղիմ ա-
մեն կողմերէն Բարիկ հասած էին: Սա-
կայն ոստիկանութեան նախարարը Մահ-
մուտ փաշայի երկու որդիները կանչել տու-
աւ իր ներկայութեան և անոնց ազդարա-
րեց իրենց ժողովին Բարիկ մէջ գումա-
րումը բացարձակապէս արգելուած ըլլա-
լը: Երիտասարդ Թուրքերը հպատակեցան:
Իրենց ժողովը Լոստոն անդի պիտի ունե-
նայ:

ԽԱՌՆ ԳԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐԲԱՆԵԱՄ ԵՒ
ԱՂԳԱՏԱԽԵԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Յանձնաժողովս շնորհակալու-
թեամբ կը ծանուցանէ թէ ողբաց-
եալ Քերիւմէ Գ. Յովակիմեանի
մահուան առթիւ, փոխան ծաղկեպը-
սակի Տիար և Տիկին Օ. Տիւրատուր
60 զրշ. ողջ նուիրած են Յանձնա-
ժողովիս անտուկին:

(Կնիք)

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խալիլի աւարադպետին պաշ-
տօնատան կողմանէ ներքին գործոց նա-
խարարութեան մամուլի գիւսին հետեւալ
ծանուցադիրը զրկուած է:

Երեքշաբթի 4 փետր. 1902ին իրիկուան
ժամը 11ը քառորդ անցած Մոնթապալի

Ժերմէնի ձեռքէն բռնած էր և ցած ձայ-
նով. «Սթա Ապուհային ձայն է, օրինորդ...
աղէկ գիտեմ»:

Ժերմէն, վերջէն, ինքնիրեն զարմացաւ
թէ ինչպէս կրցեր էր առանց նուաղելու,
տղաքը սենեակին տանիլ, թէ ինչպէս քը-
սան անգամ ուժաթափ ըլլալով չէր մարած՝
մինչև որ հասած էր այն սենեակը զոր կը
փնտռէր, սարսաղին, բարեկամութիւն յա-
րատուող ճիւղերէն առաջնորդուած:

Յուզումներէն զոգողուն, հասաւ ցած սը-
րահ մը՝ որուն զուրդ ներքինի մը կը պա-
հէր. այնչափ բուռն կերպով հրեց զուրդ որ
ներքինին թիշ մնաց վար պիտի իյնար, և
թող տուաւ որ անցնի՝ աղկան ցոյց տը-
ւած զարմանալի ոյժէն ապշած շլորած:

Ժերմէնի մտած սենեակին մէջ կէս մը
թուրիւն մը կը տիրէր և չէր կրնար ա-

Յ. ԲԵՄՊԵՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱԹԱԳԱՆ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱԳԹԻԹԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

պաշտին մէջ, Ն. Բ. Խտիլին իշխան
մը ծնաւ:

—Երեքշաբթի կէս օրէն վերջը բաղաբա-
ժամանակ Սիւմի գահաժառանգ Մահա Վա-
յիրաւուտ իշխանը և կայարանին մէջ ըն-
դունուեցաւ արտաքին գործերու նախարար
Պոլիսի բաշա Ղալիի, կառավարիչ Մա-
հէր բաշայի Ն. Բ. Խտիլին արարողագրեալ
Հասան բաշա Ասէմի և ոստիկաններու հը-
րամանատար Մանսֆէլտ պէյի կողմունէ:
Ոստիկան զինուորներու շոկատ մը զին-
ւորական պատիւներ ընծայեց և իշխանին
կառքին հետեւեցաւ մինչև Սալիյ օթէլ ուր
իջած է Ն. Ա. Բարձրութիւնը:

—Լորտ Գրոմբեր այցելութիւն տուաւ
Սիւմի իշխանին որ անոր փոխադարձ
այցելութիւն մը տուաւ:

—Լորտ Գրոմբեր Սիւմի գահաժառանգ
իշխանին ի պատիւ հացկերոյթ մը տուած
է օրուն ներկայ գտնուած են բացի Ն. Ա.
Բարձրութեան հետևորդներէն, Զօրավար
Թալպիթ Պ. և Օր. Կորսթ. Միշէ Խնս:

—Պորիս Մեծ Դուքսը Վերին Եգիպտոս
ուղևորեցաւ և Ն. Բ. Խտիլին հրամանաւ
անոր կ'ընկերանայ իր թիկնապահներէն
գալմագամ Մոհամմէտ Եալիբ պէյ:

Սիւմի Մեծ Դուքսն ալ մի քանի օրէն
Պորիս Մեծ Դուքսին քով պիտի երթայ:

—Ֆրանսական զինանախարարական գոր-
ծակալութեան սրահներուն մէջ տեղի ու-
նեցած բարեգործական տօնավաճառը որ
զինանախարարական մարմնոյ տիկնանց հո-
վանաւորութեան տակ կ'ազմուած էր 48,000
ֆրանքի հասոյթ մը արտադրած է:

—Գրեթէ Լիոնէ գրամատան հասած
հեռագրի մը նայելով Ռուսիոյ երկաթու-
ղիներու վիճակահանութեան 300,000 ֆը-
րանքի մեծ պարգևը շահած է 4,132,513
թիւը:

—Աղեքսանդրիոյ Աստղապահական Ժո-
ղովը երեք օր առաջ գումարուեցաւ Տօքթ.
Ռեֆէրի նախագահութեան ներքե:

Ժողովը որոշեց Հիճազ մասնաւոր
պատուիրակ մը զրկել ուխտաւորներու
վերադարձի միջոցին հսկողութիւն ի դործ
գնելու համար: Այս պատուիրակը
երեք ամսուան համար ամսական 30 անգ.
օսկի թոշակ մը պիտի ստանայ:

—Առջի իրիկուն տեղի ունեցաւ Մի-
շաղղային Դիւպի բացման հանդէսը, Թե-
ֆիզիկ փողոց ձեւով փաշայի զեղեցիկ պա-
լատան շէնքին մէջ: Այս առթիւ զեղեցիկ
նուագահանդէս և փայլուն պարահանդէս մը
արուեցաւ: Դիւպին նորարաց և շքեղօրէն
կահաւորուած սրահներուն մէջ:

—Լորտ Գրոմբեր և կոմսուհին այս իրի-

կուն Վերին Եգիպտոս կ'ուղևորին: Իրենց
պիտի ընկերանան Լորտ Էլֆինկթընէ զատ
Միս Ֆիլիպի, Լաի Գրոմբերի մօրաքրոջ
աղջիկը:

—Ելերտարական Թրամվէյներու ընկերու-
թեան և կառավարութեան միջև նախնական
պայմանագրութիւն մը ստորագրուեցաւ Գահի-
րի կայարանէն մինչև Սահէլ Շուպրա՝ և
լեքտրական թրամվէյի գծի մը շինութեան
մասին: Այս պայմանագրութիւնը ընկերութեան
վարչական Ժողովոյ կողմանէ վաւերացուե-
լին և նախարարացօժողովոյ հաւանութեան
արժանանալէն ետքը վերջնական պիտի դառ-
նայ:

—Շէֆհերտս Օթէլի ոճրագործութեան
զոհներէն վերաւորեալ թարգմանին ընտանի-
քին, պանդոկին տնօրէնութեան կողմանէ
20 օսկի վճարուեց և Միս կողմանէ վի-
րաւորեալ փաստարան բնէր է 4,000
օսկի գումարական տուփանքի զատ բանալու
համար տնօրէնին դէմ:

—Թանթայի և Զիֆթայի շրջալայքը
ժանտախտը կը շարունակէ: Վերջին երկու
օրուան մէջ չորս զէպք պատահած են Թան-
թայի մէջ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ԼՈՒՏՈՒՆ, 3 փետր.— Սաստիկ մըր-
րիկ մը խանգարեց Մանշի վրայ թղթա-
տար շոգենաւերու երթեկութիւնը:

Պ. Ուիլզօն որ Լորտ Միլնի խնդրա-
նաց վրայ Հարաւային Ափրիկէի մէջ որդ-
ման դրութիւն մը հաստատելու օգտակա-
րութիւնը ուսումնասիրած էր, կը հաշուէ որ
այս եղանակաւ երկրին մնայուն հարստու-
թիւնը 200 միլիոն անգլիական օսկի պիտի
աւելնայ:

Լատաւեղեակ շրջանակներու մէջ տիրող
կարծիքն այն է որ Հորանտայի առաջար-
կութիւնները մերժուած են:

ԼԱՀԷՅ, 3 փետր.— Կ'ըսուի թէ Հո-
լանտա մտադիր է իր առաջարկութիւնը բա-
րեփոխել և Մեծն-Բրիտանիոյ եղած դիւա-
նագիտական ազդարարութիւնները վերանո-
րոգել: Հաւանական է որ բանակցութիւն-
ները երկար տևեն:

ԼՈՒՏՈՒՆ, 3 փետր.— Պ. Պալմոր
յայտարարեց թէ կը յուսայ վաղը Ժողո-
վին հաղորդել Հոլանտայի ծանուցագրին
վերաբեալ պաշտօնագրերը:

Ջինտրական յաւելածական ծախքերու
մասին ներկայացուած տեղեկագիրը 226ի
գէմ 64 ձայնով ընդունուեցաւ: Գրաստներու
խնդիրը բուն ըննադատութիւններ յարոյց:

ճեղքոտած շրթունքներով այդ կծկուած
բերանը:

Պաղ սալաքարին վրայ պառկած էր, ոտ-
րերը վերամբարձ, դաստակի հաստութեամբ
վիթխարի գաւազանի մը վրայ քանի մը
անգամ պլուած չուանի մը միջոցաւ ամ-
րապինդ կաշկանդուած ու բանտուած: Այդ
գաւազանին երկու ծայրերէն բռնած էին եր-
կու ներքինիներ, և մինչդեռ երրորդ ներ-
քինի մը փողրիկ ֆէլլահ աղջկան բազուկ-
ները մէջքէն քնէ մը վեր կը զսպէր, չոր-
րորդ մը, եղի ամուր շիդով մը զինուած՝
տանց ցնցովի, համալար հարուածներով
կը զարնէր մերկ և արիւնաթաթաւ անոր
ոտքերուն տակին:

Հիմայ, Սթա Ապուհա ալ չէր պօսար.
իր բարեկամութիւն տեսիլը կարծես թէ մը-
նացած գլխի ալ իրմէ ասած տարած էր.

Պ. Պրոտշիք ըսաւ որ գրաստներու հայձայն-
ման ճիշդն ընդհանուր ընկերին խնդրանքը,
կառավարութիւնը զինուորական տանին հրա-
մայնց ընտրութիւն մը կատարել գաղտնաւ:
մի ժամանակ յիշեալ պաշտօնատան աշխա-
տութիւններուն վրայ: Պ. Պալմոր խոստա-
ցաւ որ պատերազմէն վերջը ընտրութիւն մը
պիտի կատարուէր, Ամերիկա և ուրիշ տե-
ղեր ճիշդու գնման եղանակին վրայ:

Լորտ Գրանպորն կը յայտարարէ թէ
Ռուս կառավարութիւնը նախապէս ծանուց-
ուածին համաձայն Մանչուրիան պարպելու
մտադրութենէն ետ չէ կեցած: Կը կարծուի
թէ այդ խնդրոյն վրայ բանակցութիւնը ըս-
կըսուած են:

Պահպանողական Պ. Ռապերթ, Սըր Աշ-
մէտ Պարթէթի տեղ, Էքսլէյի համար 5234
ձայնով խորհրդարանի անդամ անունունե-
ցաւ ազատական Պ. Վէյլի դէմ որ 4419
ձայն ստացաւ:

ԲՍՐԻՉ, 3 փետր.— Այսօր Երեսփո-
խանական Ժողովը վիճաբանեցաւ Զարին
Ֆրանսա ընդունելութեան յատկացեալ ծախ-
քերը կանոնաւորելու համար:

Պ. Տըժանդ ընկերակցական երեսփոխա-
նը, կառավարութեան դէմ պարսաւի առա-
ջարկ մը ներկայացուց:

Պ. Պ. Վալտէր Ռուսո և Տէքսաէ պա-
տասխանեցին որ կառավարութիւնը իր պար-
տականութիւնը կատարած է դաշնակից աղ-
ջի մը պետը ընդունած ըլլալով և Տըժանթի
բանաձեւը մերժուեցաւ 502ի դէմ 46 ձայնով:

ՊՈՍՊԷՅ, 3 փետր.— Նիժնի-Նովոյի մէջ
բրիտանական շոկատներէն երկուքը Արոս-
ներուն դէմ նոր կոխներ մղեցին: Այս վեր-
ջինները մեծ կորուստներ ունեցան, բրի-
տանական զօրքերը մէկ մեռեալ և 14 վի-
րաւոր ունեցան օրոշցմէ մին սպիտակա-
մորթ սպայ մ'է:

ԼՈՒՏՈՒՆ, 4 փետր.— Լորտ Միլնթի
պատահաբար սպաննուեցաւ Հարաւային
Ափրիկէի մէջ:

«Թայմը» Պրիքսէլէն կիմանայ թէ շա-
քարի Դեսպանախորհուրդին վիճակը կա-
խում ունի պատուիրակներուն կողմէ շա-
հակից տէրութիւններուն քով, որոց մէջ կը
գտնուի Ֆրանսա, եղած փորձին յաջողու-
թեանէն. այդ փորձը կը կայանայ յաւել-
ուածական տուրքին վրայ հինգ ֆրանքի
միօրինակ զեղջ մը ձեռք բերելուն մէջ:

ԼՈՒՏՈՒՆ, 4 փետր.— Լորտ Լանտա-
ունի պատասխանը նախ Հոլանտայի ա-
ռաջարկութեան ամփոփումը կ'ընէ, այսին-
քէն Պօէր պատուիրակներուն Հարաւային

Ափրիկէի մէջ ազատ անցագիր տալ և յի-
տոյ անոնց պէտք եղած իշխանութեամբ
Եւրոպա վերադարձին՝ Մեծն Բրիտանիոյ
հետ պաշտօնական մը ստորագրել: Այն-
տան Հոլանտայի պիտի մնար իր միջ-
նորդ միջամտել երկու կողմի պատուիրակ-
ները յարաբերութեան գնելու մասին: Գը-
նահատելով հանդերձ Հոլանտան միող մար-
դաւերական նկատողութիւնները, կառավա-
րութիւնը պարտի յարգել օտար տէրու-
թեան մը միջամտութիւնը չընդունելու մա-
սին իր որոշումը: Անհրաժեշտ է որ խա-
ղաղութիւն ձեռք բերելու ամենէն լաւ և
ամենէն արագ միջոցը Լորտ Բիշնէրը և
Հարաւային Ափրիկէ գտնուող պետերը հա-
ղորդակցութեան գնելու մէջ կը կայանայ:
Կառավարութիւնը որոշած է որ, եթէ եր-
բէք նմանօրինակ բանակցութիւններու ձեռ-
նարկութիւն, առոնք Հարաւային Ափրիկէի
և ոչ թէ Եւրոպայի մէջ, պէտք էին յա-
ռաջ տարուիլ:

ԼՈՒՏՈՒՆ, 4 փետր.— Լորտ Բիշնէր
հեռագրէ թէ վերջին շաբաթուան միջոցին
Պօէրները ընդամենը 225 հոգի կորստին,
սպաննուած, վիրաւորուած, գերի բռնուած
կամ անձնատուր եղած:

Սըր Զարլ Էլեթ Զանգիպարի ընդհա-
նուր Հիւպատոս և Արեւեան Ափրիկէի բրի-
տանական գերիշխանութեան պատուիրակ
կարգուեցաւ:

ԴԵԲԵՍՈՒՆ, 4 փետր.— Գրատող
գաւառին մէջ Պօէրները պաշարով բեցուած
կառաւուր մը գրաւեցին և մասամբ
յարկեցին:

ՎԵԼԻՆԿԻՐԸ, փետր.— Հազարի շափ
Մաօրիներ զինուորագրուեցան զինուորանոց-
ներու կամ կայսրութեան որեւէ մասին մէջ
ծառայելու համար: Այս նպատակաւ օրիշ
5,000 հոգի ալ կրնայ պատրաստուիլ:

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ
Բաժանորդագրութեանց և ծանուց-
մանց համար գիմել թերթիս սատա-
կարարին առ:

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԻՐԱՆԻԱՆ
Թղթատարական Տուփ Թիւ 732
ԳԱՀԻՐԷ

Pour les abonnements et les an-
nonces s'adresser à l'Administrateur
du journal:
M. SARKIS MIRANIAN
Boîte postale N° 732
Le Caire

նացած էր, ճմլուած և անմոռնչ, զարհու-
րելի կերպով ցնցուած տեսած բանէն, բայց
վշտաբեկութեան այդ վայրկեանը կարճատև
եղաւ. յարձակեցաւ. հարուածները տուո-
րին ձեռքէն խեց իր բարեկամութիւն շա-
քարներէն գործիքը և, բաւկը պարպելով
պօսաց՝ միւսներուն խօսքը ուղղեցով:

—Բոլոր ունեցածս ձեզի՛, բոլորն ալ,
ալ մի տանջէք օտ աղջիկը:

Իրարու երես նայեցան... ո՞վ պիտի ի-
մանար... բաց աստի պատիժն ալ բաւա-
րար էր արդէն. աղջիկը շաբաթներով ոտ-
քի վրայ կենալու կարող չըլլալու աստի-
ճան գանակոծուած էր. իրարու մէջ բաժ-
նեցին Ժերմէնին իրենց մատուցած երեք
հարիւր ֆրանքը (աշխատութեան ամբողջ
ամսական մը զոր այն առաւօտ իսկ ա-
ռած էր), և Սթա Ապուհայի ձեռքերը քա-
կելէ յետոյ, մէջքնուն այն որ կ'երևար
որ միւսներուն կը հրամայէր՝ ըսաւ Ժերմէնի:
(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵՅԻԱՆ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ֆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՁԵՐՆԵՐ

Ապահովագրական ամեն կարելի դրույթները կը գտնուին խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՖԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն — Առատաձեռն պայմաններու ճշդեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐՁԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք։
Աղքատները առնելով թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալութար։ Գ. ԵԿՍԻՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՒ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԴՆՈՒՄ 200,000,000 ՁԵՐՆԵՐ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ Զ ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՒ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւնն արժէքաւոր թուղթերու վրայ։

Ժգլնթացիկ հաշիւներ կը բանայ արքաւոր աւանդներու վրայ։

Ձրանայի և օտար երկիրներու վրայ կուտայ շէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր։

Կը գանձէ եղիպտոսի և արտա-սահմանի վրայ քաշուած փոխանա-կագրեր։

Աւանդ ձգուած գրամներուն փո-խարէն կանխորոշ պայմանաժամով մուտքաներ կուտայ։

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօռ-Սայիտ, Եաֆա, Սիւլի և Կ. Պոլիս։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենդին նաւահանգիստ-ներէն ժամանում յԱղքատներու ամեն Դա-բաթ օր, առաւօտեան ժամը 7ին։

ԵՄԵՆՈՒՄ. — Ճամբորդները բաւական ժա-մանակ կ'ունենան շոգենաւները Բի-

րէա հանդիպելուն, Աթէնք այցելել։

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօռ-Սայիտ, Եաֆա, Տալաթ, Պէյրութ, Տրիպոլիս, Մէր-սին և Իսկէնտէրիա։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենդին նաւահանգիստ-ներէն ժամանում յԱղքատներու ամեն

Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին։ Տասնհինգ օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Դրովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանք-համար գիմել ընկերութեան Աղքա-տներու, Բօռ-Սայիտի, Սիւլիի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրըի ամեն մասնաճիւղերուն։

1--1902

ԾԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԴՈՐԾԱԿԱՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԱԿԱՏԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջականներէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդ-րոններ գտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուիկի վիճակահանու-թեանց տոմսակներու, Եղիպտական Քրէտի Դոն-սիէի, Բուսիէի երկաթուղոյ բոմէսներու, և դարձեալ ամսականներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային։

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերա-բերեալ ապագայքները ըլլալու են կանխիկ փոս-թի միջոցաւ։ Գիրքերու համար կարելի է նա-խապէս կէսը զրկել և մնացեալը «գօնթոռ ուսմ-պուրստման» վճարել այն պահուն, երբ յանձ-նարարութեանը զրկուին իրենց հասցէներուն։

Մինչև 20 զըշ. արժէքով յանձնարարութիւն-ներու համար Եղիպտ. Յ. միլիոնոց դրոշմա-թուղթեր կ'ընդունուին։

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի։

Հասցէ՝

Garabed Erzenzatsian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԷՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, լիանանց և տղայոց հասար։

Ձախի վրայ գգեսներ, յուսպոյն պայմաններով։

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԷՋ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆԲԸՐԷՐՈՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թան. 5500	2ԻԽԱՅՈՅ տարողութիւն թան. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500	2ԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Ա-ղքատներու այն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵՄԵՆ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐ-ՍԻՆ, ԲԻՐՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐ-ՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ։

ԴԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Աղքատներու, Թիքասան փողոց։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ. Մամաճիւղեր.

Աղքատներու, Մամսուրա, Խարթում.
Եղիպտական Աղքատի Դրամատունը կըն-դունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթա-ցիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէ-քաւոր թուղթերու վրայ։

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴԹՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծ-մունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ա-հեճալէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղքա-ղեղէն մէյմէկ քիչ առնել։

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ ուրիշ աղքատային գե-ղերու նման չի խանդարեր ստամբուլ։

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ։